Վերը նշված բովանդակային զույգ սևեռումների ուղղահայաց զարգացումներում Դավրիժեցու պատմագիրքը երևանում է բովանդակային չափազանց լայն ընդգրկումներ՝ ներառելով կրոնական, եկեղեցական կյանքն ու քաղաքական, տնտեսական կացությունը, անդրադարձներ են կատարվում մշակութային, գիտական կյանքին, տարբեր գործիչների գործունեությանը, արծարծվում են կրոնական, փիլիսոփայական խնդիրներ և այլն: Այդ առումով Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունն առանձնանում է նախորդ պատմագիրների երկերից: «Նա հայոց պատմության շարադրանքը վերցնում է լայն առումով,– գրում է Վարագ Առաքելյանը:– Գուցե առաջին պատմիչն է մեզանում, որ իր գրքում մայր հայրենիքի պատմության հետ հյուսում է հայ գաղութների մեջ կատարվող անցուդարձերը»[16]: Խոսքը հատկապես վերաբերում է լեհահայ համայնքի կյանքին, որ վկայագրված է «Պատմութիւն նեղութեանց ու վշտոց, որ կրեցին Հայ ազգաւ քրիստոնեայքն, որք բնակեալ են ի քաղաքն Իլով» վերնագրով ԻԸ գլխում, ինչպես նաև՝ Շահ-Աբասի կողմից Պարսկաստան տարված հայ գաղթականների հետագա ճակատագրին արդեն նոր ապրելավայրերում: Բացի այս, նույն գիտնականի հավաստմամբ՝ «Հայոց հարուստ պատմագրության մեջ չկա մի գիրք, որ այնքան մանրամասնորեն ներկայացնի հայոց դպրոցների պատմությունը, ինչպես Դավրիժեցին», և որ՝ «Մեր պատմիչներից ոչ մեկը այնպիսի մանրամասնությամբ չի խոսում երկրի շինարարական գործի մասին, ինչպես Դավրիժեցին»[17]:

Բովանդակային այդպիսի լայն ընդգրկումը ոչ միայն Դավրիժեցու պատմագրքին է հատկական, այլ նաև, ընդհանուր առմամբ, ուշ միջնադարի պատմագրության առանձնահատկություններից է: «***Ուշ միջնադարի հայ պատմագիրների, ժամանակագիրների,***

---

[16] ***Վարագ Առաքելյան,*** Առաքել Դավրիժեցի (մահվան 300-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», 1970, թիվ 3, էջ 43:

[17] Նույն տեղում, էջ 37: